գերմանախոս տարածքում գերմաներենով հրատարակված հայ մասնագետների նյութերը:

## 1. Արցախն արդի արևմտայան եվրոպական ճանապարհորդական գրականության մեջ

Ըստ իս Արցախում գտնվելու ամենավաղ գերմանալեզու աղբյուրը դա Ֆրայզինգից ծագող խաչակիր Հանս Շիլտերգերի հղումն է (+ 1427-ից հետո): Շիլտերգերը գերեվարվել էր մոնղոլների կողմից և հայտնվել Արցախում, որտեղ և սովորել էր հայերեն: Նա այս տարածաշրջանը բնութագրել է որպես Հայաստանի մաս, ինչի պատճառով Ադրբեջանական ԽՍՀ Փիտոլոյունների ակադեմիան տեքստի ուսերեն թարգմանությունը խմբագրելիս փոփոխել է համապատասխան հատվածը:<sup>3</sup>

Արդիականության դարաշրջանից առաջ այս երկրամասի ճանապարհորդական տեղեկատվությունները ցավոք դեռևս գիտականորեն չեն համադրվել և միասնաբար վերլուծվել: Իսկ 17-րդ դարի արևմտյան ճանապարհորդների կողմից Հայաստանի ընկալումը, ինչպես նաև դրանից բխող գիտական վարկածները, օրինակ՝ մշակութային փոխանակման վերաբերյալ, վերջերս ուսումնասիրվել են Կլաուդիա Նիդերլ-Գարբերի կողմից 2013 թ. հրատարակված դոկտորական ատենախոսության մեջ՝ «Ինչպես Եվրոպան (բացահայտեց) Հայաստանը: Հայաստանի արվեստի պատմության հայտնագործումը արևմտյան ճանապարհորդների դիտարկումներում»:<sup>4</sup> Թեև նա անձամբ դաշտային հետազոտություններ է անցկացրել Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում և, հետևաբար, քաջածանոթ է տարածաշրջանին, ըստ իր ուսումնասիրության Արցախը գրեթե չի հայտնվում գերմանախոս ճանապարհորդների զեկուլյցներում:<sup>5</sup> Նիդերլ-Գարբերն առաջին անգամ նշում է Ֆրանսասխոս շվեյցարացի Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերյեի (1798-1850) ճանփորդությունը դեպի Արցախ: Ասվում է, որ նա հանդիպել է «բազմիցս հայկական ծագման հետքերին՝ ներկայիս Լեռնային Ղարաբաղի [...]

3 Տե՛ս Muradjan (1993), 109 և շար.:

4 Տե՛ս Niederl-Garber (2013):

5 Իր դաշտային ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս նույնը, 7: Սակայն նա Արցախի պահով համակարգված կերպով չի վերլուծում ճամփորդական տեղեկատվությունները: Ասպես օր.՝ նրա կողմից հղվող Lynch-ը (1901) տեղեկացնում է թե՛ Շուշիում Բազելի առաքելության և թե՛ ընդհանրապես Ղարաբաղի վերաբերյալ, անգամ եթե դա միայն հպանցիկ է արվում: Niederl-Garber (2013), 169 անդադադանում է նաև հայկական մշակույթի խնդրահարույց իրավիճակին. «Բացի Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող հայկական վանքերից [...] Թուրքիայում, Ադրբեջանում և մասամբ նաև Վրաստանում, քաղաքական դրոշմապատճառներից ելնելով, հայկական շինությունները միտումնավոր անտեսվել են, ոչ պատշաճ նպատակով գործածվել, ոչ մասնագիտական կերպով վերանորոգվել կամ միտումնավոր ավերվել: Հայկական ծագման ժխտումը նույնպես ամենուր է:» Փաստորեն տեղեկատվությունները, որոնցով նա զբաղվում է, արդեն իսկ պարզ են դարձնում հուշարձանների պահպանության հրատապությունը, տե՛ս նույնը, 242:

տարածքում գտնվող խիտ անտառապատ սարերում»:<sup>6</sup> Այնտեղ նա, օրինակ ի թիվս այլ տեսարժան կոթողների, Խոջախան կոչվող գյուղում գտել է խոյի տեսքով ու այլ տիպիկ հայկական ավանդական շիրմաքարեր: Դյուբուան նկարագրել է նաև մի պալատական ավերակ՝ հայկական այլ դամբարաններով: Բացի դրանից, իր ճանապարհին, Շուշիի միտակայքում նա գտել է մեկ այլ հայկական եկեղեցի, որն ըստ վրայի քանդակված արձանագրության, թվագրված էր 1158-ին: Այս եկեղեցում նա հայտնաբերել է բազմաթիվ փոխաբերական իմաստ կրող նվիրաբերություններ, ցուլերի կամ ձիերի տեսքով, որոնք ըստ Դյուբուայի վկայության պատրաստված էին տերակոտայից: Մեկ այլ 11-12-րդ դդ. եկեղեցու ավերակ էլ է նկարագրվում նրա կողմից, որը գտնվում էր Շուշիից դեպի էլիզավեթպոլ ընկած ճանապարհին՝ Շախբուլախ գյուղի վերնամասում:<sup>7</sup>

Փաստորեն Դյուբուան այն եզակի արևմտաեվրոպական ճանապարհորդներից է, ով իսկապես գիտական հետաքրքրություն է ունեցել ու նկարագրել Արցախի տարածքում եղող կոթողները, որոնք ինքն անձամբ այցելել է: Առհասարակ Արցախի գրավոր հիշատակման սակավությունը կարող է կապված լինել այն իրողության հետ, որ ճանապարհորդների մեծ մասը, Երևանից դուրս գալով, պարզապես շարժվել են Արաքսի հովտով, այսինքն՝ Նախիջևանով դեպի Սպահան կամ Սոր Զուղա ու այդպիսով շրջանցել արևելյան լեռնային մասերը:

## 2. Եկեղեցական պատմության հողվածներ և աստվածաբանական գրականություն Հայաստանի մասին

Եթե ուսումնասիրենք ներկայիս գերմանալեզու հանրագիտարաններն աստվածաբանական և եկեղեցիների պատմագրության ոլորտում, ապա գրեթե ոչ մի հիշատակում չենք գտնի Արցախի մասին: Այն չի նշվում նաև հայ եկեղեցուն վերաբերող ներածական աշխատանքներում:

Ընդարձակ «Աստվածաբանական Իրական Հանրագիտարանում» (*Theologische Realenzyklopädie/TRE*) Արցախի մասին ոչ միայն չկա որևէ հողված, ինչն ինքնին այդքան էլ զարմանալի չէ, այլ առհասարակ տվյալ տարածաշրջանը չի շոշափվում հանրագիտարանի որևէ մեկ ուրիշ հողվածի շրջանակներում: Չնայած նրան, որ այստեղ Հայաստանի մասին մանրակրկիտ մի հողված կա, որի առաջին մասը Վոլֆգանգ Հագեն է գրել, իսկ երկրորդը՝ Բերտոլդ Շփուլերը,<sup>8</sup> միևնույն է, շատ բովանդակալից կերպով գրված այս երկու բաժինները նույնպես չեն հիշատակում Արցախը:

6 Նույնը, 69:

7 Տե՛ս նույնը, 70:

8 Տե՛ս Hage (1979); Spuler (1979): Տեքստերի ամբողջական ուսումնասիրությունը փաստում է, որ Արցախը/Լեռնային Դարաբաղն այլ տեղերում ևս ընդհանրապես առկա չէ նշված հանրագիտարանում:

Հայաստանի վերաբերյալ ևս երկու հոդված կա «Անտիկ Շրջանի և Քրիստոնեության Իրական Հանրագիտարանում» (*Reallexikon für Antike und Christentum*): Դրանցից մեկը հրատարակվել է արդեն իսկ 1950 թ. Գերհարդ Քլինգեի կողմից, որը սակայն ուղղակի չի առնչվում Արցախին:<sup>9</sup> Ի հավելելումս դրան՝ 2001 թ. ևս մի հոդված է տպագրվել Միշել վան Էսբրուեկի կողմից՝ կովկասյան Ալբանիայի վերաբերյալ:<sup>10</sup> Սա միայն հպանցիկ է անդրադարձնում Արցախին՝ հղում կատարելով հայերի և ադրբեջանցիների ծագումնաբանության քննարկումներին:<sup>11</sup>

Մեր թեմայի վերաբերյալ շատ ավելի հստակ տեղեկություններ է տալիս «Քրիստոնեական Արևելքի Փոքր Հանրագիտարան»-ի (*Kleine Lexikon des Christlichen Orients*) երկրորդ հրատարակությունը: Այստեղ Յոզեֆ Ռիստը մշակել է Աղվանք (Ալբանիա կովկասում),<sup>12</sup> ինչպես նաև Ալբանական եկեղեցին և Հայաստանը խորագրերը, իսկ Կարլ Պինգերան՝ Հայ առաքելական եկեղեցին: Ըստ իր ներկայացրած տեսության, Արցախի շրջանը բնակեցված է եղել նախ աղվաններով, որոնք քրիստոնեացվել են Հայաստանի կողմից դեռևս 4-րդ դարում: Նրանք միշտ սերտ կապի մեջ են եղել հայոց եկեղեցու հետ և գնալով՝ ասիմիլացվել հայերի կողմից: Հարկ է նշել, որ միայն այս հանրագիտարանն է ներկայացնում «Լեռնային Ղարաբաղ» խորագրով մի առանձին հոդված՝ գրված նույնպես Յոզեֆ Ռիստի ձեռամբ:<sup>13</sup> Դրանում նա ընդգծում է, որ Արցախը պատմական շարունակականության մեջ է գտնվում կովկասյան Ալբանիայի քրիստոնեական թագավորության հետ, որի միայն մի փոքր մասն էր կազմում Ղարաբաղի լեռնային լանդշաֆտը: Եվ միջնադարում այստեղ ներգաղթող հայերի հետ միաձուլման պատճառով այն դարձել է արևելահայկական բնակավայր: Տեղի քրիստոնեական անկլավը մշտապես շատ սերտ մշակութային և կրոնական կապեր է տածել Հայաստանի հանդեպ: Ռիստի կարծիքով, Ադրբեջանի հետ հակամարտությունը գտել է իր «պարտությունը կովկասյան այբանացիների ծագումնաբանության վերաբերյալ հայ և ադրբեջանցի հետազոտողների խիստ տարակարծիք վարկածներում»:<sup>14</sup> Սույն պնդումով Ռիստը հստակորեն ուրվագծում է ներկայիս գրեթե ողջ գերմանախոս հետազոտությունների դիրքորոշումը (տվյալ թեմատիկ ուղղությամբ):

9 Տե՛ս Klinge (1950):

10 Տե՛ս van Esbroeck (2001):

11 Տե՛ս նույնը, 258, Արցախի մասին 262:

12 Տե՛ս Rist (2007a+b): Ըստ նրա, Կուրից հարավ գտնվող Աղվանքի տարածքները 387 թ. անցել էին Հայաստանին և կառավարվել առանձին փոքր միավորներով: 9-րդ դարում Աղվանքն ամբողջությամբ վերացել է որպես անկախ քաղաքական միավոր և 1000-1266 թթ. ստեղծվել է Արցախի թագավորությունը: Արևմտյան լեռնաշխարհում (Ղարաբաղ) աղվան քրիստոնյաները միաձուլվել են հայերի և վրացիների հետ, իսկ 15-րդ դարից առաջացել են անկախ քրիստոնեական իշխանություններ (մելիթություններ): Աղվանից եկեղեցու ինքնավարությունը հռչակվել է 488 թ. Վաչագան III թագավորի կողմից Պարտավում գումարված եպիսկոպոսաց ժողովում: Այնուհետև Աբաս եպիսկոպոսը (552-596) ստանձնել է Աղվանից կաթողիկոսի տիտղոսը, որի նստավայրը 13-րդ դարից սկսյալ գտնվում էր Գանձասարում:

13 Տե՛ս Rist (2007c):

14 Նույնը, 371:

Որպես հայոց եկեղեցուն վերաբերող մենագրություն, հատկապես առանձնանում է Լոթար Հեյզերի 1983 թ. հրատարակած «Հայոց եկեղեցու հավատքի վկայությունը»:<sup>15</sup> Սույն աշխատությունը հանրաճանաչ դարձրեց Հայաստանի պատմությունը, կրոնն ու աստվածաբանությունը գերմանախոս բազմաթիվ հետաքրքրված ընթերցողների համար: Հեյզերն, ի թիվս այլ տեղեկությունների, մատնանշում է Մեսրոպ Մաշտոցի առաքելությունը վրացիների և Կովկասի այբանագիների շրջաններում, որոնց համար նա նաև նախագծել է իրենց լեզուներին համապատասխան այբուբեններ:<sup>16</sup> Սակայն քանի որ մենագրության թեման առհասարակ աստվածաբանությունն ու հայ քրիստոնեության բարեպաշտությունն են, այն էլ ավելի չի ծավալվում Արցախի մշակութային ժառանգության ուղղությամբ:

1985 թ. հրատարակված Լորե Բարթոլոմյուսի՝ Հայաստանի ժառանգության և ներկայի մասին գիրքը, շատ կարեկից և բովանդակալից կերպով է շարադրված:<sup>17</sup> Սա հայոց եկեղեցու վերաբերող գիտական վերլուծություն չէ, բայց և այնպես մեծաքանակ ու կարևոր տեղեկություններ է պարունակում: Այդուամենայնիվ, սույն գրքում ևս ոչ մի խոսք չկա Արցախի կամ այնտեղի մշակութային արժեքների մասին, ինչը մասամբ հասկանալի է հաշվի առնելով հեղինակի ուշադրության կենտրոնն առաջին հերթին դեպի Երուսաղեմի հայություն:

### 3. Արցախն արվեստի պատմության հրապարակումներում

Հայաստանի արվեստի պատմության մասին 20-րդ դ. երկրորդ կեսին շատ նշանակալից հատորներ է հեղինակել Հալլեի համալսարանի Մերձավոր Արևելքի հնագիտության պրոֆեսոր Բուրխարդ Բրենտյեսը (1929-2012): Սակայն դրանց մեջ Արցախի մշակութային ժառանգությունը միայն լուսանցքային հիշատակում է գտել: Դա հավանաբար կապված է այն փաստի հետ, որ Խորհրդային Միությունում Արցախը քաղաքական իմաստով Հայաստանի Հանրապետության կազմում ընդգրկված չէր: Հենց այս իրողությունն էլ ի սկզբանե աչքի առջև է ունեցել Բրենտյեսը: ՀԽՍՀ-ից դուրս, նա համենայն դեպս զբաղվել է հայկական կարևոր ճարտարապետական կոթողներով, ինչպես օր.՝ Աղթամարը, Անին և Գանձասարը:

Բրենտյեսի «Երեք հազար տարիների Հայաստան» գիրքը լույս է տեսել երեք հրատարակությամբ 1973-1984 թթ. միջև: Թեև հեղինակը ժամանակ առ ժամանակ լուսանցքային եղանակով հիշատակում է Արցախը, բայց և այնպես մանրամասն չի անդրադառնում տեղի մշակութային արժեքներին:<sup>18</sup> Նաև նրա ներկայացման մեջ

15 Sñu Heiser (1983):

16 Sñu նույնը, 23:

17 Sñu Bartholomäus (1985):

18 Sñu Brentjes (1984), 161 և շար., որտեղ նա քննարկում է 1620 թ. խաղաղությունն ու պարսկական Ղարաբաղի



տարածաշրջանի բռնակցումը Ադրբեյջանին (1923 թ.) ոչ մի տեղ փաստագրված չէ: Այս կերպ գիրքն անուղղակիորեն պարզ է դարձնում, որ այդ ժամանակ Դեմոկրատիկ Գերմանիայի Հանրապետությունում ապրող հեղինակն առանց վերապահումների որդեգրում է առկա խորհրդային սահմանները: Համապատասխանաբար ներփակ քարտեզը ներկայացնում է միայն մասնակիորեն ՀԽՍՀ-ի հուշարձանները:

Խորհրդային Հայաստանին կենտրոնացած լինելու պատճառով Արցախը նույնպես դժվար թե տեղ գտներ հայկական արվեստին վերաբերող մեկ այլ չափազանց ուշագրավ ժողովածուում, որը Բրենտյեսը հրատարակել է Ստեփան Մնացականյանի և Նոնա Ստեփանյանի աշխատակցությամբ: Բացի մի քանի ընդհանուր պատմական տեղեկություններից, որոնք արդեն իսկ առկա էին Բրենտյեսի վերոնշյալ գրքում,<sup>19</sup> այստեղ Արցախի մասին միայն մեկ հիշատակում կարելի է գտնել, որը նվիրված է 13-րդ դարի արվեստին.

«Այս շրջանին են պատկանում նաև Ղարաբաղի գավառական փոքր եկեղեցիները: Այստեղ կարելի է գտնել որմնանկարների մնացորդներ Առաջաձորի եկեղեցում և Դադիի վանքում, որը կառուցվել է Արզու-Խաթուն արքայադստեր կողմից 1214 թվականին: Վերջինիս մեջ մասամբ նշմարելի է Սբ. Ստեփանոսի քարկոծման տեսարանը»:<sup>20</sup>

Արցախի մշակույթի մասին այլ տեղեկություններ չկան այս հատորում: Աշխարհագրական մարզինալության հետ մեկտեղ, Բրենտյեսի և նրա համահեղինակների կողմից Արցախի մշակութային հուշարձանները կարծես թե անտեսվել են նաև իրենց այսպես ասած գավառական բնույթի պատճառով:

## 4. Արցախի ընկալումը գերմանական գրականության մեջ 1988 թ. սկսյալ

Ինչպես հայտնի է, 1988 թ. ԼՂԻՄ-ի գերագույն խորհուրդը հայտ է ներկայացրել՝ Հայաստանին միանալու համար, ինչը մերժվել է Ադրբեյջանի կողմից: Սա մի շարք հակամարտությունների խթան հանդիսացավ, որոնց զագաթնակետերը եղան 1991 թ. Արցախի անկախության հռչակումն ու Ադրբեյջանի կողմից այն վերանվաճելու փորձերը: 1994 թ. մայիսին վերջինս ստիպված էր կնքել հրադադար՝ համաձայնելով տարածքային

նահանգի ստեղծումը: Դրանից բացի նա նշում է Ղարաբաղի մելիքներից մեկի որդու, Իսրայել Օրիի նախաձեռնությունը Հակոբ Դ (Ջուղայեցի) կաթողիկոսի հետ միասին Արևմուտքի ուղղությամբ միությունն առաջ տանելու փորձը:

19 Sté Brentjes (1981), 42: Խոսքը միևնույն տեղեկությունների մասին է, ինչպես որ ներկայացված է հմր. 18 ծանոթագրությունում:

20 Brentjes (1981), 240:

կորուստներին: Հենց այս ժամանակահատվածում, 1988-1994 թթ. միջև, Գերմանիայում լույս տեսան Արցախի մշակութային ժառանգությանը նվիրված առաջին կարևոր հրատարակումները: Սակայն դրանք ավելի շատ թեմատիկ ներածություններ են և պատմական ակնարկներ, քան իսկապես խորը գիտական մշակումներ:

Արդեն իսկ 1988 թ. սեպտեմբերին Համբուրգի կաթոլիկ ակադեմիան մոնսինյոր Վիլմ Սանդերսի նախագահությամբ կազմակերպեց «Հայաստան. փոքր ժողովուրդ մեծ ժառանգությամբ» խորագրով մի տեղեկատվական գիտաժողով:<sup>21</sup> Դրա պատճառը բնականաբար այն ժամանակվա ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում տեղի ունեցած իրադարձություններն էին:<sup>22</sup> Ներկայացված հոդվածների մեծ մասում Լարաբաղը միայն հակիրճ է քննարկվում:<sup>23</sup> Միայն Տեսաս Հոֆմանն է այստեղ առաջին էական զեկուլյրը ներկայացնում՝ «Լարաբաղ. Հայաստանի բաց վերքը» խորագրով: Դրանում նա անդրադառնում է հակամարտության պատմական արմատներին և շեշտում հատկապես Ռուսաստանի չափազանց երկկողմ դերը:<sup>24</sup> Արցախի մշակութային նշանակության մասին նա միայն լուսանցքում է խոսում.

«Լարաբաղը հնագույն ժամանակներից հանդիսանում է հայկական մշակութային տարածք՝ զարդարված հայկական աշխարհիկ և կրոնական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններով: Այստեղ են հյուսվում կովկասյան ամենաթանկ գորգերը: Լարաբաղը հայտնի է եղել նաև իր «ուկեգույն» ձիերով: Հայերի համար, սակայն, այս տարածքն առաջին հերթին ազատասիրության և դիմադրության ոգու ուղն ու ծունծն է: [...]»<sup>25</sup>

21 Sten Sanders (1989):

22 Նույնը, 7:

23 Sten Kantian (1989), այստեղ էջ 69, ուր նա ընդգծում է, որ Արցախը Հայաստանի առաջին մասն էր, որը 1813 թ.-ին հայտնվեց ռուսական տիրապետության տակ, թեև Հայաստանի այս դժվարանցանելի լեռնային շրջանը սովորաբար լավագույն պաշտպանությունն էին ներկայացնում թշնամիների դեմ (այլ կարծիքի է Hofmann-ը (1989), 117, ըստ որի Արցախն արդեն իսկ 1804 թ. Ռուսաստանի կառավարման ներքո էր անցել): նաև Sanders (1989), 104 և շար. հաղորդում է խորհրդային իշխանությունների կողմից Լեռնային Լարաբաղի տարածաշրջանում երկու եկեղեցիների վերաբացման մասին, ինչի շնորհիվ ավելի քան 60 տարվա ընթացքում առաջին անգամ Լարաբաղի հայ քրիստոնյաներին վերստին տրվում է իրենց սեփական աղոթատեղիների իրավունքը: 1920 թ. այնտեղ դեռ կար 100 հայկական եկեղեցի և վանք, սակայն ներկայումս (այսինքն 1980-ականների վերջին), ըստ ԵՀԽ-ի, 160.000 հայերի համար ոչ մի գործող եկեղեցի չկա:

24 Hofmann (1989): Տե՛ս այնտեղ այնպիսի հայտարարություններ, ինչպիսիք են. «Ռուսաստանը երբեք չի վարձատրել հայերին նրանց լավ ծառայությունների համար» (108): «[...] ռուսական բյուրոկրատիայի միջամտությունները Հայաստանի դպրոցների ու եկեղեցիների տնօրինման հարցում ծանր ազդեցություն ունեցան, [այսպես] 1903 թ. բռնագրավվեցին բոլոր այն եկեղեցական գանձերը, որոնք անհրաժեշտ չէին անմիջականորեն ծխակատարությունների համար» (111): «Հայերի և աղբբեջանցիների միջև արյունալի բախումների ժամանակ [...] ռուսական բանակը միտումնավոր երկար ժամանակ հետ է կանգնել և այդպիսով հայերին հանձնել ավելի ազդեցիկ և թվով գերազանցող աղբբեջանցիներին» (112): «Հետևապես, հայերը Ռուսաստանի համար եղել են միայն երբեմն օգտակար շահամատային զինվորներ՝ վերջինիս արևելյան քաղաքականության խաղային քայլերում՝ ըստ Թուրքիայի նկատմամբ տվյալ իրավիճակում որդեգրած պահվածքի: [...] Հայաստանն առանց հայերի» այսպես էր սահմանվում Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկու «Ռուսական արտաքին քաղաքականության նպատակը» (112): տե՛ս վերջապես նաև ռուսների հանդեպ ունեցած վստահությունն ու Խորհրդային Միությունից կախվածությունը, նույնը 130:

25 Նույնը, 116 և շար.:

Եվ ընդամենը ամփոփիչ կերպով է մոտենում մշակութային հուշարձանների վիճակին:

«Ինքնավար այս մարզի պաշտոնապես գրանցված 1600 ճարտարապետական և մշակութային հուշարձաններից միայն 64-ն է պահպանվում պետության կողմից: Մեծամասնությունը [...] մատնված է քայքայման կամ ինչպես տասնյակ հայտնի դեպքերում, նույնիսկ՝ միտումնավոր կործանման [...]: 1929-1932 թվականներին փակվել են Ղարաբաղի բոլոր 100 գյուղական եկեղեցիներն ու 18 մենաստանները: [...] այժմ նախատեսվում է երկու եկեղեցիների վերաբացումը:»<sup>26</sup>

Արցախի մշակութային արժեքներով առաջին անգամ մանրամասն զբաղվեց 1993 թ. Մանֆրեդ Ռիխտերի խմբագրած «Հայկական Լեռնային Ղարաբաղը/Արցախը զոյատևման մարտում» վերնագրով ժողովածուն:<sup>27</sup> Այնտեղ հատկապես կարևոր է Հրավարդ Հակոբյանի ներդրումը, ով որպես Մատենադարանի գիտաշխատող ներկայացրել է Արցախի միջնադարյան պատմությունը՝ մշակութաբանության տեսանկյունից:<sup>28</sup> Նա ուսումնասիրել է ոչ միայն գրականությունն, այլև ճարտարապետությունը, խաչքարերն իրենց հայտնի ինքնատիպությամբ, դեկորատիվ և կիրառական արվեստները, որոնց վառ օրինակներից է՝ 1202 թ. ամենահին հայկական գորգը:<sup>29</sup> Ի թիվս այլոց, ներկայացվում են նաև Դադիվանքի, Առաջաձորի և Կիրանցի որմնանկարներն, ինչպես նաև այնտեղի ձեռագրերի մանրանկարչությունը: Դրանով անշուշտ շոշափվում են շատ կարևոր թեմաներ, բայց իհարկե դեռևս սպառիչ կերպով չեն քննարկվում: Այս առումով հեղինակի եզրափակիչ խոսքերը մեզ ամենքիս հրավիրում են հետագա ուսումնասիրությունների:

«Միջնադարյան Արցախի արվեստի այս համառոտ ուրվագիծը միայն առաջին փորձն է, որպեսզի բացահայտվի հայ ժողովրդի բազմազան ու հարուստ ժառանգության ևս մեկ պատմություն, որի սահմանագծային ուղեւիշները դեռևս մանրակրկիտ ու խորաթափանց ուսումնասիրության կարիքն ունեն:»<sup>30</sup>

26 Նույնը, 119 և շար.:

27 Տե՛ս Richter (1993): Հատորը ներառում է նաև Koutcharian-ի (1993a) շատ ընդհանուր հոդվածը, ուր Արցախի թեմի հիմնումը վերագրվում է Գրիգոր Լուսավորիչի թոռանը՝ Գրիգորիսին, որը նահատակվել է Աղվանքում իբրև մարտիրոս: Մինչև 1815 թ. Աղվանից կաթողիկոսության նստավայրը տարբեր վայրերում է տեղակայվել, և ի վերջո գտնվել Քանձասարում՝ մինչև 1815 թ.: Ռուսական իշխանության օրոք այն իջեցվել է մետրոպոլիտոսյան մակարդակի և 1931-ին փակվել ազերիների կողմից: Թեմը վերականգնվել է միայն 1989 թ.: Մեկ այլ աշխատության մեջ Koutcharian (1993b), էջ 94-ում նշվում է, որ Արցախի եկեղեցին 302 թ.-ից գտնվում էր Աղվանից կաթողիկոսության ներքո, իսկ 8-րդ դարից՝ հայ հոգևորականության:

28 Տե՛ս Hakobian (1993):

29 Նույնը, 37:

30 Նույնը, 44:

Այս ուղղությամբ արդեն որոշ փոքր հավելյալ քայլեր են արվել: Ավարտելով կցանկանայի դրանցից երեք օրինակ բերել:<sup>31</sup>

## 5. Հին մշակութային լանդշաֆտի վերագտնում. Հայաստանի պատկերները 1994 թ. հետո

Արցախյան առաջին պատերազմի ավարտից անմիջապես հետո, 1995 թ., հունվարի 14-ից ապրիլի 17-ը Բոխումում տեղի ունեցավ Հայաստանին նվիրված լայնածավալ ցուցահանդես: Դրա կատարողը հատակորեն ցույց է տալիս, որ Արցախն այժմ բնականաբար հայկական ցուցանմուշների մեջ է, անգամ եթե տվյալ տարածաշրջանի ուրույն թեմատիկացման խնդիրը, ինչպես և նախկինում, իրագործված չէ:<sup>32</sup> Արցախը ներառնվում է նաև բոլոր հավասարակշռված պատմական ներածություններում:<sup>33</sup> Ժան-Պիեր Մահեն Դարաբաղի դեպքում տեսնում է մի լեռնային շրջան, որը «միջնադարից մինչև նոր ժամանակներ հայկական անկախության վերջին ապաստանն» է հանդիսացել:<sup>34</sup> Սա պարադոքսալ է համարում այն փաստը, որ 20-րդ դ. առաջին կեսին «Արցախի հինավուրց նահանգի կորիզը, որն իբրև առաջին հայկական տարածք պահանջել էր միություն Ռուսաստանի հետ, այդուամենայնիվ չի պատկանում Հայաստանի Հանրապետությանը»:<sup>35</sup> Արցախը բնականաբար ներկայացվում է նաև Արմեն Ջարյանի հեղինակած հայկական ճարտարապետության ներածությունում:<sup>36</sup> Ժողովածուի վերջում տպված մանրամասն ժամանակագրական աղյուսակներում ևս անդրադարձ է կատարվում

31 Այստեղ ես չեմ կարող 1994-ից սկսյալ ողջ գերմանախոս գրականությունը ներկայացնել, որը նվիրված է հայերին: Հիշարժան է ի միջի այլոց Eid-ը (2006): Կովկասում հայերի իրավիճակին է անդրադառնում նաև Feigel-ը (1989):

32 Sten Museum Bochum (1995): Արցախի ցուցանմուշներից կարելի է այս կատարվում ի միջի այլոց տեսնել Nr. 174 – Ավետարան առանց թվ. (Մատենադարան, ձեռ. № 2743, այստեղ՝ 1232 թ.); Nr. 175 – Ավետարան 1261 թ.-ից առաջ և 13-րդ դ. (Մատենադարան, ձեռ. № 378): Հիշատակվում են նաև Շուշիի գորգերը (1815 թ.), նույնը, 328; Nr. 241 (Ժողովրդական արվեստի թանգարան, Երևան, նմուշ № 1600): Բացի դրանից ցուցադրվել են 19-րդ դ. ասեղնագործություններ Արցախից, տես Nr. 252 և շար. (Հայաստանի պատմության թանգարան, Երևան, նմուշներ № 282 և 8410/3): Կատարվում նաև հղում է կատարվում Արցախում ծնված արվեստագետների մասին, ինչպես օր.՝ Հակոբ Գյուրջյանը (\*1881 Շուշիում; նույնը, 384):

33 Sten Mahé (1995): Ի թիվս այլ նյութերի, հեղինակը զբաղվում է հայերի էթնիկ ծագումնաբանությամբ, և առաջ քաշում այն թեզը, որ նրանք ուրատացիներից են զալիս՝ անգամ եթե հայերը հետագայում այլ ծագման լեզու են ընդունել (նույնը, 10): Սա նաև վկայակոչում է այնպիսի պատմական մանրամասներ, որ օրինակ Աբբաս-Միրզան ոչ միայն աջակցել է 1826 թ. Անդրկովկասում մահմեդականների ասպատակությանն, այլև հերթական հարձակումն է իրականացրել Դարաբաղի լեռներում:

34 Նույնը, 15:

35 Նույնը, 17:

36 Sten Zarian (1995): Այնտեղ նա նշում է Ջորադիր (Սորադիր) և Հոխիսիմե եկեղեցիների տիպը Օխտը Դոնի վանքի դեպքում (5-րդ դ. վերջ, այսօր՝ Հաղրութի շրջան) և ըստ այրմ փաստում, որ այս տիպի եկեղեցաշինության առաջին օրինակները փաստորեն գտնվում են Արցախ-Սյունիքում (նույնը, 122): Բացի դրանից նա ընդհանուր ուրվագծերով հիշատակում է նաև Արցախում եղած մեկիքների ամրոցները (նույնը, 125):

Արցախին նույնիսկ եթե այնտեղ բացակայում են 19-րդ և 20-րդ դդ. տարածաշրջանի քաղաքական զարգացումների վճռորոշ իրադարձությունները:<sup>37</sup>

Արցախն ավելի մանրամասն է դիտարկվում Աննեգրետ Պլոնտկե-Լյունինգի 2007 թ. հրապարակված հաբիլիտացիոն առենախոսությունում, որն ընդհանրապես Կովկասի վաղ քրիստոնեական ճարտարապետությանն է նվիրված:<sup>38</sup> Աշխատությունը հիմնովին ուսումնասիրում է Կովկասի վաղ եկեղեցաշինությունը՝ այդ ընթացքում քննարկելով Արցախը և Ուտիքը որպես «սահմանագծային նշանակիրներ»: Պլոնտկե-Լյունինգը կարևորում է, որ տվյալ երկրամասը պետք է ուսումնասիրվի՝ նախևառաջ հաշվի առնելով տարածաշրջանային բազմազանությունը:<sup>39</sup> Ըստ այդմ, նա կենտրոնանում է Արցախից մի քանի պատմական շինությունների վրա, որոնք որպես սահմանագծային նշանակիրներ վերագրում է Աղվանքին,<sup>40</sup> սակայն մյուս կողմից դրանք համարում հայկական մշակույթով<sup>41</sup> խորապես ազդված կոթողներ:<sup>42</sup> Եկեղեցական-քաղաքական առումով Արցախի եկեղեցին թեև 363/387 թթ. գտնվել է Աղվանքի իրավասության ներքո, 7-րդ դ. սկսյալ այն, սեփական նախաձեռնությամբ, հայոց եկեղեցու ենթակայությանն է անցել:<sup>43</sup> Տարածաշրջանային մշակութային ժառանգությանը նման մոտեցման ձևը Պլոնտկե-Լյունինգի կողմից անշուշտ օրինակելի է, բայց այն սահմանափակվում է ուշ անտիկ շրջանի կարճ հատվածով՝ հիմնվելով միայն եկեղեցական ճարտարապետության գրական<sup>44</sup> և հնագիտական<sup>45</sup>

37 Sten Museum Bochum (1995), 464 (853/54 թթ. արաբական զորամիավորումներն ապարդյուն հարձակվում են Արցախի վրա); 467 (1722-1728/30 թթ. Դավիթ Բեկի գլխավորությամբ տեղի են ունենում հայերի ապստամբություններ Արցախում և Սյունիքում՝ պարսիկների և թուրքերի դեմ); 468 (1836 թ. մարտի 11-ին Ղարաբաղում ուժի մեջ է մտնում Ռուսական կայսրությունում գործող հայոց եկեղեցու նոր կանոնադրությունը՝ «Պոլոժենիե»-ն): Հիշատակումներ չկան 1923 թվականի և Արցախի պահով դրա ձակատագրական կարևորության մասին:

38 Sten Plontke-Lüning (2007):

39 Ամփոփիչ կերպով Կովկասի շրջանների շինությունների մասին, տե՛ս նույնը, 347: Արցախն այնտեղ չի առանձնանում իբրև ուրույն գոտի:

40 Ըստ Plontke-Lüning-ի, ուշ անտիկ ժամանակների աղվանական եկեղեցական շինությունների գրական ավանդույթն Արցախում և Ուտիքով հանդերձ, վերաբերում է բացառապես «Հայկական Աղվանքին», ինչը կարելի է վերագրել մասնավորապես հիմնական աղբյուրի հեղինակ Մովսես Դասկուրանցիի ծագմանը (նույնը, 195):

41 Sten նույնը, 131 խոսում է Արցախի հայ բնակչության մասին, որը կապված էր բազմազգ Աղվանքի հետ, մինչև վերջինիս անկումը:

42 Sten նույնը, 122, հաստատում է, որ 387 թ. հայկական հյուսիս-արևելյան (sic!) մարզեր՝ Արցախը և Ուտիքը, ինչպես նաև Գարդման ու Կողթ գավառները վերցվել էին Աղվանքի կողմից: Սա ավելի մանրամասն ներկայացնում է Արցախի պատմությունը ն. Քր. 2-րդ դ. մինչև 20-րդ դ. մի ակնարկում (նույնը, 131): Այստեղ նա շեշտում է, որ միայն առանձին Արցախի նախկին սահմանները դժվար է նշել ու թվագրում Արցախի յուրացումը Աղվանքի կողմից արդեն իսկ 363-ին:

43 Sten նույնը, 152: Այստեղ նա հաստատում է, որ Սմարասի եպիսկոպոսներն Արցախի կարևորագույն առաջնորդներից են եղել:

44 Արցախի եկեղեցական շինությունների վերաբերյալ գրական աղբյուրների մասին տե՛ս նույնը, 187-193: Այստեղ նա հիշատակում է ի թիվս այլոց Գիշն ու Ջրվշտիկը (եղիշե առաքյալի վանքը), Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մոտակայքում, ինչպես նաև Մեծ Իրանքի տաճարն ու Գլխավանքը՝ նույնպես Մեծ Կվենք գավառում, Տրտու (Թարթառ) գետի հովտում:

45 Արցախում վաղ շրջանի եկեղեցական շինությունների վերաբերյալ հնէաբանական վկայությունների մասին տե՛ս նույնը, 275, ուր նա նախևառաջ մատնանշում է փաստագրությունների սակավությունը: Այստեղ

աղբյուրներին: Ընդհանուր առմամբ, նրա կողմից թվարկված պատմական շինությունների քանակը շատ սակավաթիվ է:

Ի վերջո հարկ է նշել, որ ընթացիկ գիտաժողովի կազմակերպիչները 2021 թ. Մարտին Թամբեի առաջնորդությամբ հրատարակված գիտական ժողովածուում նախաձեռնել են ևս մեկ փորձ՝ ավելի լայն տեսանկյունից կենտրոնանալու հատկապես Արցախի մշակութային արժեքների վրա:<sup>46</sup> Մասնավորապես այնտեղ հարկ էր հրապարակել Արցախում մշակութային կոթողների պաշտպանության հրատապ կոչը: Այդ մշակութային արժեքների ցանկում ընդգրկված ձեռագրերն իրենց յուրահատկությամբ ներկայացվել են նշված ժողովածուում Թամարա Մինասյանի կողմից:<sup>47</sup> 2021 թ. հունիսի 9-ի մեր գիտաժողովի զեկուլցների մեծ մասն արդեն իսկ հրապարակվել է: Միևնույն ժամանակ, նրանց հատուկ ուշադրությունը դեռևս բավարարչափոփ հաշվիչի առեղ Արցախի ողջ մշակութային ժառանգությունը: Այդ իսկ պատճառով, տվյալ նյութի էլ ավելի տարբերակված ու ամբողջական ուսումնասիրությունը կներկայացվի սույն հատորում:

## Գրականություն

- Bartholomäus, Lore, In jedem Kreuz ein Lebensbaum. Aus Armeniens Erbe und Gegenwart, Köln [1985]:
- Brentjes, Burchard, Drei Jahrtausende Armenien, Leipzig<sup>3</sup>1984:
- Brentjes, Burchard, Stepan Mnazakanjan, Nona Stepanjan, Kunst des Mittelalters in Armenien, Berlin 1981:
- Eid, Volker Im Land des Ararat. Völker und Kulturen im Osten Anatoliens, Darmstadt 2006:
- Esbroeck, Michel van, Art. Albanien (in Kaukasien), in: RAC Suppl. 1 (2001), 257-266:
- Feigel, Uwe, Das evangelische Deutschland und Armenien, Die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen, Kirche und Konfession 28, Göttingen 1989:
- Hage, Wolfgang, Art. Armenien 1. Alte Kirche und Mittelalter, in TRE 4 (1979) 40-57:
- Hakobian, Hravard, Zur Geschichte Arzachs im Mittelalter in kulturgeschichtlicher Hinsicht, in: Manfred Richter (ed.), Armenisches Berg-Karabach/Arzach im Überlebenskampf. Christliche Kunst - Kultur - Geschichte, Berlin 1993, 15-66:
- Heiser, Lothar, Das Glaubenszeugnis der armenischen Kirche, Sophia 22, Trier 1983:
- Hofmann, Tessa, Karabach - Armeniens offene Wunde, in: Wilm Sanders (ed.), Armenien - Kleines Volk mit großem Erbe, Hamburg 1989, 107-132:
- Kantian, Raffi, Das Lied vom Ararat, in: Wilm Sanders (ed.), Armenien - Kleines Volk mit großem Erbe, Hamburg 1989, 59-91:
- Klinge, G.[erhard], Art. Armenien, in: RAC 1 (1950), 678-689:
- Koutcharian, Gerayer, Das Katholikat von Albanien bzw. Gandsassar (4. bis 19. Jahrhundert), in: Manfred Richter (ed.), Armenisches Berg-Karabach/Arzach im Überlebenskampf. Christliche Kunst - Kultur - Geschichte, Berlin 1993 (1993a), 90-92:
- Koutcharian, Gerayer, Armenien 1915, Arzach 1992, in: Manfred Richter (ed.), Armenisches Berg-Karabach/Arzach im Überlebenskampf. Christliche Kunst - Kultur - Geschichte, Berlin 1993 (1993b), 93-97:
- Lynch, Henry F.B., Armenia. Travels and Studies, I+II, London 1901:

ներկայացվում են Պարտավի (Ուտիքում), Թագաբենդի և Ամարասի բազիլիկները: Մի խաչաձև շինություն կարելի է տեսնել Աղդամի շրջանի (Տիգրանակերտի մոտակայքի) Վանքասարում, տես նույնը, 291:

46 Տն՝ Tamcke (2021):

47 Տն՝ Minasyan (2021):

- Mahé, Jean-Pierre, Armenien: Das Land, die Menschen und ihre Geschichte, in: Museum Bochum u.a. (ed.), Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft, Bochum 1995, 9-18:
- Մանուկեան, Աբել, Պազելի աւետարանական քարոզչական ընկերութիւնը և հայերը (1823-1835), in: Martin Tamcke, Harutyun G. Harutyunyan, Dagmar Heller, Andreas Müller, Egbert Schlarb (ed.), Das armenische Kulturerbe in Berg-Karabach/Arzach und die Deutschen, Göttingen 2021, 81-113:
- Minasyan, Tamara, Das Erbe der Skriptorien von Arzach, in: Martin Tamcke in Zusammenarbeit mit Harutyun G. Harutyunyan, Dagmar Heller, Andreas Müller und Egbert Schlarb, Das armenische Kulturerbe in Berg-Karabach/Arzach und die Deutschen, Göttingen 2021, 33-46:
- Museum Bochum u.a. (ed.), Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft, Bochum 1995:
- Muradjan, Parujr, Ein Volk oder ein Gebiet, in: Manfred Richter (ed.), Armenisches Berg-Karabach/Arzach im Überlebenskampf. Christliche Kunst-Kultur-Geschichte, Berlin 1993, 107-111:
- Niederl-Garber, Claudia, Wie Europa Armenien »entdeckte«. Das Bekanntwerden der Kunstgeschichte Armeniens im Spiegel westlicher Reisender, grazer edition 14, Wien/Berlin 2013:
- Plontke-Lüning, Annegret, Frühchristliche Architektur in Kaukasien. Die Entwicklung des christlichen Sakralbaus in Lazika, Iberien, Armenien, Albanie und den Grenzregionen vom 4. bis zum 7. Jh., Veröffentlichungen zur Byzanzforschung 13, DÖAW.PH 359, Wien 2007:
- Richter, Manfred (ed.), Armenisches Berg-Karabach/Arzach im Überlebenskampf. Christliche Kunst - Kultur - Geschichte, Berlin 1993:
- [Rist, Josef] JR, Art. Albanien, in: Kleines Lexikon des Christlichen Ostens/ ed. Hubert Kaufhold, Wiesbaden 2007 (2007a), 7-9:
- [Rist, Josef] JR, Art. Albanische Kirche, in: Kleines Lexikon des Christlichen Ostens/ ed. Hubert Kaufhold, Wiesbaden 2007 (2007b), 9 և շար.:
- [Rist, Josef] JR, Art. Nagorny-Karabach, in: Kleines Lexikon des Christlichen Ostens/ ed. Hubert Kaufhold, Wiesbaden 2007 (2007c), 370 և շար.:
- Sanders, Wilm (ed.), Armenien - Kleines Volk mit großem Erbe, Hamburg 1989:
- Sanders, Wilm, Kirche unter dem Kreuz. Zur kirchlichen Situation in Sowjet-Armenien, in: Wilm Sanders (ed.), Armenien - Kleines Volk mit großem Erbe, Hamburg 1989, 93-106:
- Spuler, Bertold, Art. Armenien 2. Neuzeit, in TRE 4 (1979) 57-63:
- Tamcke, Martin, in Zusammenarbeit mit Harutyun G. Harutyunyan, Dagmar Heller, Andreas Müller und Egbert Schlarb, Das armenische Kulturerbe in Berg-Karabach/Arzach und die Deutschen, Göttingen 2021, <https://doi.org/10.17875/gup2021-1779>:
- Zarian, Armen, Im Zeichen des Kreuzes. Architektur der Armenier, in: Museum Bochum u.a. (ed.), Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft, Bochum 1995, 119-127:

## Հեղինակ

### **Անդրեաս Մյուլլեր, անբն. գիտ. դոկտ., պրոֆ.**

Քիլի Քրիստիան-Ալբրեխտ համալսարանի Եկեղեցիների և կրոնների պատմության ամբիոնի վարիչ, Աստվածաբանական գիտությունների միությունում Եկեղեցիների պատմության մասնագիտական խմբի ղեկավար և Քրիստոնեության պատմության ուսումնասիրության միջազգային կոմիտեում Գերմանիայի եկեղեցու պատմության ազգային ներկայացուցիչ, [AMueller@kg.uni-kiel.de](mailto:AMueller@kg.uni-kiel.de)

Թարգմանությունը՝ Հարություն Գ. Հարությունյանի

---

## Open Access

This paper is published under the Creative Commons Attribution–ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.